ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Զարկաստանի համար տարեշրջանը 5 Ֆր. կամ 2 ըբլ.ռս. Թղթդրմ.

Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, ամբողջ 10րդ հրջանի (94 օգոստ.—95 մայիս) բաժնորդագինն է 20 Ֆր. կանխիկ։ Կարելի է նաեւ բաժնորդագրուիլ քանի ամսի համար ալ որ ուզուի, ամեն մէկ ամսականը 2½ Ֆր. հաշուելով և 1894 մայիս ամսէն անդին չանցնելու պայմանով։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

ԺԱ ՏԱՐԻ ԹԻԻ 11

1894 ՍԵՊՏԵՄԲԵՐ 5

ՕԳՈՍՏՈՍ 24 (Հ.Տ.)

ՋՈՐԵՑՈՒԹԻՒ

Կը հրատարակուի Ա. և Երբ. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։ Յանուցմունք կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։ Յանուցման 1 միջակ գիրը 1 սանտիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանտիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de la Rédaction (Allées de Meilhan, 44.)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարդ. Հայոց Հայրիկը Սեդրակեան Արիստակէս եպիսկոպոսին իր խորհրդական ընտրել, ինչպէս այդ կամենում են ոմանք. — Նամակ Պարսկաստանէն (Դաւրէժ). — Թուրքօ-պարսկական սահմանագլխին վրայ. — Հայուհուն խնդիրքը, Հայաստանցուն կեանքը (ոտանաւոր). — Հայ լրագրութեան հարիւրամեայ յոբելեանը. — Ֆրանսա. — Թիւրքիաէն լուրեր. — Արտասահմանի լուրեր. — Յանուցմունքներ։

ԿԱՐՈՂ Է ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԴՐԱԿԵԱՆԻՆ ԻՐ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ ԸՆՏՐԵԼ, ԻՆՉՊԷՍ ԱՅԺ ԿԱՄԵՆՈՒՄԵՆ ՈՄԱՆՔ

Որդի՛ք մարդկան, մինչեւ ե՞րբ էք խստասիրտք. ընդէ՞ր սիրէք զնաւիրուքիւն եւ խնդրէք զստուքիւն։

Սաղմոս Դաւթի Դ.

(Շար. 10րդ թուէն եւ վերջ)

Դառնանք դարձեալ Աղուանեան Գրիգորիս եպիսկոպոսին, տեսնենք ի՛նչ է ասել։

Ձեմարանի մասին ասել է որ տեսչի օգնականը ապրելով ճեմարանի շինութեան մէջ, միայն ոտճիկ է ստացում և գործ չէ կատարում և թէ հարիւր մի դիշեր վերադառնալով մեր ժամը 2ին ճեմարան, սանդուղներով բարձրանալիս վար է ընկել և վախել այնպէս որ անզգայ վիճակի մէջ վերցնելով տարել են իր սենեակը. աշակերտները տեսել են (վկաներ կան)։ Բացի սրանից, տեսչի օգնականի համար ասել է՝ որ նա անկրօն է, որովհետեւ տեսչի օգնականը ատոուածաբանութիւնը անուանել է ցնդաբանութիւն (վկաներ կան)։ (1)

Ֆրանսերէնլեզուի ուսուցչին համար ասել է որ նա չէ յաճախում դասերը և ոչինչ չէ ուսուցանում. Արիստակէսը պահումէ նրան որովհետեւ իր բարեկամն է (բարեկամութեան աստիճանը կարելի է իմանալ վաղարշապատում)։

Կարամուրզայի մասին ասել է, որ Կարամուրզան իր օրինաւոր կինը թողած է և իր աղախնի հետ կ'ապրի ճեմարանի դիմացի |բնակարանում, այնպէս որ ճեմարանի տղաները ամեն բան կ'տեսնեն և կ'իմանան, վատ օրինակ կ'առնեն։ Պատմել է ինչպէս գիւղացիները եկել ասել են իրան Աղուանեան Սրբազանին. «Սրբազա՛ն, ջանիդ

որովհետեւ Սաղաթէլովը Արիստակէսին և Երեմիային ծառայութիւններ է արել»։ Ձչմարիտն ասած՝ մենք չ'հետաքրքրուեցանք հարցնել այդ ծառայութիւնների մասին վասն զի ժամանակը սուղէր և կանայի սեռի ներկայութիւնը արգելք է մանրամասնութիւնների մէջ մտնելուն (ցանկացողները կարող են էջմիածնում տեղեկանալ)։ Մենք պնդեցինք միայն, որ Արիստակէսը պէտք է զիջանէր Հայրիկին, որովհետեւ պետութիւններն անգամ՝ երբ ընդհանուր գործի չահերը պահանջումեն, հեռացնումեն դեսպանական կամ հիւպատոսական պաշտօններից իրանց սիրած և յարգած մարդուն, ո՛ւր մնաց որ Արիստակէսը չէ ներկայացնում իրանից պետութիւն, այլ ստորադրեալ է։ Ընդ սմին յայտնեցինք որ Արիստակէսը անընդունակ գտնուեցաւ և անցեալից դասեր առնել չ'կարողացաւ։ Յիշեցինք ինչպէս նա 1878 թուին առաջնորդական փոխանորդ լինելով Շուշի, հոգեւոր դպրոցի տեսչի Բաբաջանեանց վաճառի հետ վէճերով զբաղուելով, գլխաւոր գործը, այն է դպրոցի բարեկարգութիւնը մոռացաւ. յիշեցինք որ այդ մասին նոյն թուին «Մշակ» լրագրի մէջ յօդուածներ երեւեցան. և Գրիգոր Արծրունին 88 համարի առաջնորդուեմ հետեւեալ միտքն էր յայտնել. «Ուրիշ քաղաքակրթուած երկրներում, երբ մարդիկ տեսնումեն, որ իրանք ապարդիւն են այս կամ այն հասարակական պաշտօնի համար, նոքա իսկոյն թողնումեն իրանց պաշտօնները։ Մեր հասարակական գործողները չեն հասել այդ գրութեանը (պէտք է հասկանալ զարգացմանը). Նրանց մեծ մասը ոչ թէ գործին են ծառայում, այլ վարձատրութեանը և կըրքերին»։

Ի՞նչ կասէր Արծրունին, եթէ կենդանի լինէր և տեսնէր որ Արիստակէսը, չնորհիւ իր կրքերին, գործը տանել է տուել։ Ի՞նչ կ'ասէր Արծրունին այն ուսուցիչների մասին, որոնք տեսնելով Արիստակէսի հեռանալը պաշտօնից իրանց պատճառով, իրանք ևս պաշտօնի մէջ

մեռնենք, այս Ղարամուրզան կինը թողած՝ իր քոյրի հետ կ'ապրի. եթէ մեր տղաները մեծանալով, աւարտելով ճեմարանում և հետեւելով նրա օրինակին, մի մի ոսկ մատուչկա (կին) առնեն ապրին հետները, մեր աղջկերանց հալը ի՞նչ պէտք է լինի»։

Սեդրակեան եպիսկոպոսի կուսակիցները ասումեն, որ մարդուս մասնաւոր կեանքը ոչ մի կապ չունի հասարակական գործունէութեան հետ (չգիտենք՝ ո՞ր բարոյագիտութեան հիման վրայ). այնպէս որ Սեդրակեանը կարող էր Կարամուրզային՝ իբրեւ ուսուցիչ պահել։ Կարող են այդպէս մտածել Արիստակէս եպիսկոպոսի կուսակիցները. բայց Հայրիկից պահանջել, որ նա էլ այդպէս մտածէ, այդ անզգամութիւն է։

Որպէս զի հասկանաս, ժողովո՛ւրդ Հայոց, այդ անզգամութեան աստիճանը, լո՛ր թէ ի՞նչ է պատմում Շվեդացի հռչակաւոր հեղինակ Բիէրնսոնը Ամերիկայի մասին, հաղորդելով հետեւեալ դէպքը։ «Միացեալ Նահանգների արեւմուտքում հարկաւոր էր վաչինգտոնի ծերակոյտ ժողովի համար նորից անդամ ընտրել մի նշանաւոր քաղաքական գործիչ։ Ընտրութիւնները, ինչպէս յայտնի է, կատարվում են համապատասխան նահանգի օրէնսդրական ատենում։ Եւ ահա՝ ընտրութեան ժամանակ, այդ ատենում վեր կացաւ իր տեղից հին պուրիտական տոհմի սերնդից մէկը և ասաց. «Ես իմ աչքերովս տեսայ, ինչպէս մեր նշանաւոր գործիչը վաչինգտոնում կատարված մի ոճրագործութիւնից յետոյ գնաց՝ ի՞նչ էք կարծում, ո՞ր. հասարակաց տունը։ Ես կարծում եմ, որ ով պիտի խաբել իր կնոջը՝ նա կզգաստանայ խաբել և ուրիշներին»։ Թեկնածուն նորից չընտրուեցաւ։ Ընտրողները այն կարծիքին էին, որ իրաքանչիւր յառաջադիմութիւն պահանջումէ անձնազոհութեան կարողութիւն, և բացի դրանից, մասնաւոր կեանքում ունեցած բարոյականութեան պարակական բարոյականութեան։

Մենք կարծումենք, որ Հայոց Հայրիկը վերցնելով պուրիտանական տոհմի աղնիւ սերնդին համազակից եւ ուսուի և չէր կարող կարամուրզային համբերել ճեմարանի մէջ, նոյնպէս և նրանց, որոնք իրանց կոչմանը անհամապատասխան էին ցոյց տուած նախորդ տարիները։

Աղուանեանց Սրբազանը չատ բաներ ունի ասած, բայց նկարագրեցինք միայն վերոյիշեալ փաստերը, որոնց մէջ ընդհարումն է յառաջացել Հայրապետին և եպիսկոպոսին մէջ. այս փաստերը բաւական են հայ ժողովրդի աչքերը բանալու որպէս զի հայ ժողովուրդը լաւ հասկանայ մեր Հայրիկի և Սեդրակեան Արիստակէսի յարաբերութիւնները։ Անկարդ չի լինիլ մի քանի խօսք ասել Տէր Յովսէփի ձեռնադրութեանը վերաբերութեամբ Արիստակէսի հետ ունեցած Հայրիկի խօսակցութեան մասին։ Որքան մեզ յայտնի է, այդ ձեռնադրութեան մասին Հայրիկը խօսել է Արիստակէսի հետ դեռ ևս Երուսաղէմում և ապա Էջմիածնում։ Արիստակէս բաւականութիւն չէ տուել Հայրիկին, կարծելով որ ամեն ինչ անյայտ կ'մնայ։ Մենք կարծումենք՝ որ Արիստակէսը գիտէր որ Աբշէն երէցի քարոզի վերջի «Ժողովուրդ Հայոց, ես քարոզելով և գրելով քո ճաշակը կը'բանամ, ճանաչել և զգայնել կը տամ քեզ քո պարտիք» խօսքերը վերաբերումեն մասամբ և այդ կեղծ համախօսականին, որը Արիստակէսը կաղմել էր տուել իր ազգական քահանայացուի համար։ Արիստակէս գիտէր և Աբշէն երէցի ո՛վ լինելը, որովհետեւ Էջմիածնի ապարանում ոչ մի բան ծածուկ չէ կարող մնալ. գիտէր գուցէ և հետեւեալ քարոզի նիւթը իր խօսակցութիւններ հիման վրայ և այդ է պատճառը, որ Արիստակէսը չատպել է իր «Ո՛վ հաւատաց»ը հրատարակել և իր արբանեակների միջոցաւ տարածել ժողովրդին մէջ թէ Հայրիկը ասումէ որ մեզ ուսումնական քահանայ պէտք չէ։ Եւ ճարպիկութեամբ ընդհանրապէս խօսելով ազգ քահանաներ ձեռնադրողների կաշառակերութեան վրայ, կամեցել է չացնել ժողովրդի աչքերը և յիմարացնելով նրան, ծածկել իր գաղտնի դիտաւորութիւնը, այն է Հայրիկի վարկը կտրել ժողովրդի աչքում։

Այստեղ կարեւոր ենք համարում մի հարց դնել. եթէ Արիստակէս եպիսկոպոսը մի քահանայի խստիւ պատժումէ իրը թէ 100 մանէթի կաշառքի համար, ինքը՝ որ կեղծութիւն է կատարում, կեղծ համախօսականով

(1) Մօտ օրերս հանդիպեց մեզ մի գիւղական ուսուցիչ, որ գալիս էր Վաղարշապատից. հաղորդեց չատ տեղեկութիւններ Էջմիածնի մասին. ի միջի այլոց խօսք եղաւ և Գէորգեան ճեմարանի թերուսուց և անկարգ վիճակի վրայ։ Ես նկատեցի թէ Արիստակէսը չափազ է հրաժարական տար, այլ Հայրիկի, որ իր և մեր ընտրած մարդն էր, պահանջները կատարելով, պէտք է մնար պաշտօնի մէջ և աչքատէր ծառայել գործին։ Այդ գիւղական ուսուցիչը յայտնեց մեզ որ «Հայրիկի պահանջը կատարելու համար հարկաւոր էր, որ Արիստակէսը մի քանիներին Թուռում և Սաղաթէլովին հեռացներ պաշտօնից. բայց այս էլ անել չէր կարող

քահանայ է ձեռնադրում, անպէտք մարդկանց առանձին իրեն ցոյց տուած ծառայութիւնների պատճառով պահում ազգային հաստատութեան մէջ, տակնուվրայ անելով այդ հաստատութիւնը. ի՞նչ պատժի է արժան։ Եթէ մի քահանայ կատարէր այս յանցանքը, հաստատ գիտենք որ Ս. Էջմիածնի տակէսը ամենախիստ պատժի կենթարկէր նրան։

Կարելի է որ մի քանիների կարծիքով, կեղծ համախոհականով քահանայ ձեռնադրելը ինչպէս և ձեռնադրվելը ուղիութիւն է. իսկ մենք կարծումենք որ այս տեսակ կեղծ համաձայնականով քահանայ ձեռնադրելը և ձեռնադրվելը նշանակումէ անիշխանութիւն քարոզել, նշանակումէ ցոյց տալ ժողովրդին որ նա կարող է և իրաւունք ունի ոչ մի օրէնք չկատարելու, ոչ ոքի իրաւունք չ'ճանաչելու, նշանակումէ թօքել օրէնքների և իրաւունքների վրայ, նշանակումէ ծաղրել ժողովրդական իրաւունքները։

Վերջացնելով մեր խօսքը, յայտնումենք որ Արիստակէսը գիտէ սխալ ուղի մնտրակէս, գիտէ և խղճի յանգանքներ զգալ։ Ուստի Հայոց Հայրիկը չէ կարող ընտրել նրան իր խորհրդական։ Յայտնումենք դարձեալ որ այդ կեղծ համախոհականը ինչպէս և Սինոդին Տփխիի կօնսիստորիային գրած հրամանը, որի մէջ Արիստակէսը կեղծումներ է գործել, կարելի է Էջմիածնի սինոդում աչքով տեսնել և ձեռքով չօշափել. միւս այս տեղ յայտնած փաստերը նոյնպէս կարելի է ստուգել Էջմիածնում։

1894 թ. յունիսի 20ին

ՎԱՂԱՐՇ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Դաւրէժ, յուլիս 31/12 օգոստ. 94

Սալմաստի Հաֆթուան հայաբնակ գիւղի աւերքը, տեղական սովորութեան համեմատ, կառավարութենէն գնած էր տեղիս Ղալաբէկին (Թաւրիզի հայ թագի թագապետը). սա Հաֆթուան գնալով սկսած էր այնտեղ տարապայման պահանջներով նեղել գիւղացիները, ծեծել և բանտատկել։ Գիւղացիներն ալ խմբովին Տիլմանի (Սալմաստի կառավարչանիստ աւանը) երթալով, անկէ հեռագրած են Դաւրէժ բարձր Գահաժառանգ Իշխանին։ Տիլմանի գաւառապետը Հաֆթուանէն դուրս արած է Ղալաբէկին իր մարդերով. իսկ Տիլմանի հեռագրատունը դիմող Հաֆթուանցիներէն ալ 14 հոգի ախտախտեալներ (ծերուկներ) բանտարկած է Տիլմանի մէջ։

Հաֆթուանցիներէն 35 հոգի իրենց գիւղի կողմէն եկած են այժմ այստեղ բողոքելու համար։ Յուլիս 28ին մի ազերսագիր պատրաստած, ամենքը միասին գիմեցին Վէլիի ահոի (Գահաժառանգ Իշխան) պալատը։ Նորին Բարձրութիւնն ազերսագիրը կարդալէ յետոյ, իր մարդերի միջոցով պատասխանած է թէ ինք կը հրամայէ Գայմագամին որ հարկ եղածը կարգադրէ և խնդրագիրներին յետ դարձնելով, հրամայած է որ երթան Գայմագամին։ Գիւղացիները գնացած են Գայմագամին. բայց սա դժկամակեր է հաւատալ թէ գիւղացիների ասածները ճիշդ են. և երբ ասոնք պնդեր են իրենց ասածների ճշմարտութեանը վրայ, յայտարարելով նաեւ թէ իրենցմէ մարդիկ կան բանտարկուած Տիլմանի մէջ, Գայմագամը (որ այստեղի նահանգապետն է) պատասխաներ է թէ վաղը կերթաք Քեաբկիւզարին (արտաքին գործերի պաշտօնեայ, որին յանձնուած են Քրիստոնեաների գործերը) և այնտեղ կատարգրէք ձեր բողոքագիրը, պայմանով որ եթէ ձեր ասածները սուտ լինին, մարդ գլուխ 500 թիւմէն պիտի վճարէք և 500 փայտ պիտի ուտէք։ Գիւղացիները կը համաձայնին և դուրս կելնեն։

Այդ միեւնոյն օր Գահաժառանգ Իշխանի կողմէն մարդ գալով Առաջնորդ Սրբազանին, կը հրաւիրէ հետեւեալ օրն երթալ ներկայանալ Իշխանին։ Սրբազանը յուլիս 25ի առաւօտ ներկայանալով Նորին Բարձրութեան, շատ լաւ կերպով ընդունուեցաւ։ Պաշտօնական ձեւակերպութիւններէն յետոյ, Գեր. Պարզեանց արքեպիսկոպոսը սրտամօրմիք կերպով յայտնեց իր ցաւերը և բազմաթիւ խնդիրների դեռ առկախ մնացած լինելը, որոնց անմիջական լուծմանը համար ինք քանիցս դիմումներ արած է։ Իշխանը զարմանք յայտնած է որ կառավարական պաշտօնեայները համարձակած են այդպիսի անհոգութիւններ և անկարգութիւններ անել և Սրբազանին խոստացած է հրամայել որ աչալուրջ ուշադրութեամբ նկատի առնուին իր գանգատները և գոհացում արուի իրեն։

Առաջնորդ Սրբազանը Գահաժառանգ Իշխանի պալատէն մեկնելէ յետոյ, ուղղակի կերթայ Միսեթէչարին, այսինքն Քեաբկիւզարին, որ նոյնպէս զարմանք կը յայտնէ թէ այդպիսի անիրաւութիւններ կը լինին Սալմաստի մէջ. իսկ Հաֆթուանցիների մասին կասէ թէ «Թո՛ղ գան այստեղ վաղը և եթէ հաստատուն որ Տիլմանի մէջ իրենցմէ մարդիկ կան բանտարկուած և տուրքերի պատճառով կը նեղեն իրենց, իսկոյն հեռագրով հրաման կը ղրկենք որ արձակեն բանտարկուածներին և հանդիստ թողուն գիւղացիներին մինչեւ իրենց կարն ու գիւղական աշխատանք վերջացնելը։»

Այսօր 30ին ալ Սրբազանը ներկայացած է Գայմագամին որ խոստացեր է Տիլմանի մէջ բանտարկուածներին արձակման հրաման ղրկել և Ղալաբէկին էլ Դաւրէժ բերել տալ։

ԹԻՒՐՔՕ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԴԱՏԻՆ ՎՐԱՅ

(Քաղուածներ Եւրոպական եւ Կովկասի լրագիրներէն)

Սէմաֆօրի թղթակիցը Կ.պոլսեն օգոստոս 30ին գրած է հետեւեալը։

Դարձեալ ի վեր անկարգութիւններ և չիմիւթիւններ անսպասելի եղած Թիւրքօ-պարսկական սահմանագլխին վրայ, Քէրպէլային և Սիւլէյմանիէին սկսած մինչեւ Քօթուր և Պայազիտ Տակաւին այժմ ալ սահմանագլխին վրայ 200 մղոնին աւելի երկարութեամբ տեղ կայ որի սեփականութիւնը վէճի տակ է դեռ և պարզ կերպով որոշուած չէ երբէք թէ ո՞րին կը պատկանի։

Վեց շաբաթի չափ առաջ պարսիկները որոնք աչք տնկած են մի քանի տեղերի և մանաւորապէս Քէրպէլային որ Շիաների սրբավայրն է, մի տարօրինակ յանդուգն դիրք բռնեցին և յարձակեցան Սիւլէյմանիէյի (1) կողմը գտնուող մի բաւական ընդարձակ տեղի վրայ։ Ցարձակողները թաւխառական պէտուիններ կամ քիւրտեր չեն, ինչպէս այդ պատահած է ուրիշ անգամներ, այլ կանոնաւոր զօրքեր են, լաւ զինուած և կանոնաւոր հրամանատարութեան տակ։

Ընդհանրապէս կը կարծուի որ այդ արշաւանքի բուն դրդողն եղած է Զէլլա Սուլթանը, Պարսկաստանի Շահի անդրանիկ որդին, որ կիր յանդուգն քաջութեամբ և փառասիրութեամբ յայտնի է արդէն։ Կը պատմուի որ մի օր խոստացեր է իր հօր Պաղտատը անոր տիրապետութեան տակ դնել և թերեւս իր այդ դիտաւորութիւնն է որ իրագործել ձեռնարկած է(2)։ Երբ Կ.պոլսի մէջ իմացուեցաւ վտանգին ծանրութիւնը, իսկոյն փութացին չարժման մէջ դնել ամբողջ 6րդ զօրաբանակը որի կեդրոնատեղը Պաղտատն է։ Եւ երբ նորէն իմացուեցաւ այստեղ թէ այդ բաւական չափ լինի, հրաման ղրկուեցաւ Մուսուլի և Տիգրանակերտի կառավարիչներին որ պատրաստ գտնուած բոլոր զօրքերը ղրկեն սահմանագլխի վտանգի ենթարկուած կէտերը։ Պէտք է յուսալ թէ թիւրքերը կը յաջողին վերջապէս յետ մղել յարձակողները։ Եթէ պարսիկների ձեռքն անցնին այն տեղերը ուր յարձակում եղած է, ատկէ ոեւէ մի շահ չեն ներ քաղաքակրթութեան համար ալ։

Թաւրիզ յուլիս 23/4 օգոստ.

Վերջապէս հազիւ թէ Մակուայ հողը այժմ խաղաղ կացութեան մէջ է չնորհիւ այն անակնկալի, բայց յաջողակ դէպքի, որ նորերս տեղի ունեցաւ Պարսկաստանի սահմանակից թրքական Բայազէդ քաղաքում։

---

(1) Արմենիայի 8րդ թուով այս քաղաքի համար գրուած ծանօթութեան մէջ մի սխալ սպրդած է. փոխանակ լինելու «Արտազատականի հարաւային արւմտեան կողմը», արեւելեան կողմն է եղած։

ԽՄԲ. ԱՐՄ.

(2) Ինչպէս կերեւի, անճշդութիւններ կան թրքական աղբիւրէ բերած այս լուրերի մէջ։ Զէլլէ Սուլթան իր տեղէ չէ չարժած այս միջոցին, այլ Դաւրէժի Գահաժառանգ Իշխանը գնացած զինաթափ միայն արած է Արտազատականի հարաւային կողմի սիւնէն Քիւրտերը որ մի՛ գուցէ իրենց կրօնակից օսմանեան Քիւրդերին ապստամբին արշաւանքներ անելու Պարսկաստան։

ԽՄԲ. ԱՐՄ.

Շէյխ-Իբրահիմի ոխակալ ժառանգներից մինը — քրդաբնակ տեղի գլխաւոր Ալի խանը, որ մեղադրւում էր Խոյի ճանապարհում երեք ֆերաշների հետ սպանուած Մակուայ խան Թէմուր-աղայի եղբայր Իսախփաշայի ոճրագործութեան մէջ, իրեն սաստիկ հետեւող ճարպիկ թշնամու մօտալուտ սպառնացող վտանգից ազատուելու յուսով, մի գիշեր վեր է կենում իւր մօտ հարիւր հրոսակային ձիաւորներով փախչում իւր երկրի սահմաններից դուրս և ապաստանում Յիշեալ Բայազէդ քաղաքում։ Բայց մարդասպանի եղբօրորդին, տեղեկանալով հաստատ, որ պարսից կառավարութիւնը մտադիր է Թէմուր-խանի ձեռքով նրա ցեղը սպառ սպրտել, շտապում է մի մեծ ծառայութիւն անել Թէմուր-խանին՝ նրա սիրտը շահելու համար։ Նա եւս մօտ գիշերով, բայց ծածուկ իւր դրացիներից, փախչում է Բայազէդ, ուր յաջողւում է նրան սպանել Ալի-խանին, թողնել դիակը, իսկ գլուխը՝ արիւնաթաթախ մի սրածայր ձողի անցկացրած, մատուցանել Մակուայ խանութեան հետեւեալ բնաբանով. — «Մենք ձեր տեղ ձեր փոխարէն վրէժխնդիր եղանք չարագործից. ահաւասիկ նրա գլուխը, որ բերելով ձեզ փեշքեշ և ներկայացնելով ձերդ մեծութեան՝ պատիւ ունինք յայտնելու, որ չկայ այլեւս այն մարդասպանը, որ յանդգնութիւն է ունեցել սուր խազացնել ձեր եղբօր դէմ՝ առանց չափելու և կշռադատելու ձեր հզօր բազկի ոյժը։ Ուրեմն այժմ կարող էք հանդիստ լինել ու ապահով»։

Թէմուր-խանը թէեպէտ շատ է ուրախ լինում այս պատահական ինքնայայտնող դիպուածի վրայ, բայց և այնպէս իւր վրէժխնդրական անդուլ ոգու բաւականութիւնը լիովին լցուցանելու համար, իւր եղբօրորդու խանութեան ժառանգ Հասան-Ղուլի Մէրվէնդի առաջնորդութեամբ ուղարկում է վերոյիշեալ դէպի թշնամու երկիրը իւր կարգադրութեան տակ գտնուած զօրքերը՝ որոնք աւերելով չորս քրդական գիւղերը և չարաչար կերպով սրերի մատնելով Ալի-խանի կողմնակիցներից շատերին, նորերս Խոյի ճանապարհի վրայով Մակու վերադարձան։ Գահաժառանգ Մուղիֆերը էդդինը, որ գտնւում էր Մարագայի բանակում Քիւրդստանի ցեղերին զինադադար անելու, որպէս զի սրանք ոչ մի նախորդ ու նպաստակաւոր ապստամբական ցոյցեր անել չկարողանան Պարսից պետութեան դէմ Թէմուր-խանի կատարած արշաւանքի պատճառով, յանկարծ մի ուրախալի հեռագիր ստանալով Մակուայ խանութիւնից, դադարեցնում է իսկոյն իւր գործողութիւնները՝ բաւականանալով միայն քրդերի քանի մի մեծահարուստ շէյխերից ու ցեղապետներից հազարաւոր թումաններ դուրս կորզելով։

(Նոր-Դար)

ՀԱՑՈՒՀՈՒՆ ԽՆԴԻՐԸ, ՀԱՑԱՍՏԱՆՅՈՒՆ ԿԵԱՆՔԸ

Հայ գիւղացի աղջիկ մըն եմ Հայաստանի խորերէն,
Թող սաւառնի սիրտս ու հոգիս Հայոց լեռներ ձորերէն,
Հանի այնտեղ, ուր մեր եղբարք ազատ են մեր ցաւերէն,
Օգնութիւն մը հայցել իրենց գթոտ ազնիւ սրտերէն։

Ա՛խ, եղբայրնե՛ր, մոխիկ ըրէք ամեն օրուան մեր քաշած,
Քուրտին Թուրքին է մեր վաստակ, մենք կը ճանք մերկ, քաղցած.
Հոգ չէ մեզ լաթ, ո՛չ հաց, ո՛չ կեանք, ա՛խ մեր պատիւն անարատ,
Մեր կուսական անբիծ ճակատ բա՛ւ է կրէ զազիր Քուրտի պիղծ արատ։

Մեղնէ չատեր, պէտք է գիտնաք, անգութ Քրատց գերուհիները եղեր են,
Վատ Քուրտերը իրենց հարէմ հայուհիով կազմեր են.
Կ՛առեւանգեն, թէ՛ մայր լինի, թէ՛ նոր հարս մը և թէ՛ կոյս,
Այդ անօրէն Թուրք լուծին տակ երբէք չկայ մեզ մի յոյս։

Երբ արեւը մայր կը մտնէ, ամեն թռչուն կերթայ բոյն,
Անտեղ անհոգ հանգիստ կ՛առնէ մինչ ի ծագել արեւուն.
Բայց խեղճ Հայը չունի հանգիստ ո՛չ երեկոյն, ո՛չ առտուն,
Անով դողով սիրտն է լեցուն, բոլոր գիշերն է արթնուն։

Թէ՛ հայր, թէ՛ մայր, աղջիկ թէ՛ մանչ և թէ՛ հարուստ կամ աղքատ,
Մինչ կաթնակեր մանկունք անգամ վիշտէ կոծէ չեն ազատ։
Հայ գիւղացին երբ ունենայ եղներ կովեր և ոչխարք,
Մէկ օրուան մէջ զարնեն տանին, կընեն զինքը խեղճ աղքատ.

Երբ սերմանէ, բուսած արտերն Քրտաց հօտէն կ՛արածուին.
Թէ պատահի հունձի հասնի, հրոյ ճարակ կը տրուին.
Եւ կամ թողուն, քաղէ, ծեծէ, կալին վրայ պատրաստէ,
Քուրտին Թուրքին հարկ տուրք տալով՝ կը զրկուի ապրուստէ։

Ա՛խ քաշելով՝ կ՛առնէ ցուպը պանդխտութիւն երթալու,
Թշուառութեան ղոհ կը դառնայ, քիչ մը ատակ չհեղու.
Եւ շահածը բաւ չի լինիր պարտուց տոկոսը տալու.
Տարիներ եաք յուսահատած՝ ա՛լ կ՛որոշէ Տա գալու։

Ոչ ոք կրնայ ճանաչել զինք մինչեւ իսկ իւր ամուսին.
Հիւծած մաշած, քամակը կոր, ցնցոտիները չատ հին.
Մանչ զաւակներ չի գտներ տուն, հետեւած են իւր բախտին.
Ա՛խ ու վախով՝ սովեալ նեղուած, խեղճը կուտայ իւր հոգին։

Իսկ դատերը՝ ալ պարտքի փոխան քարշ տուեր են Քրտին տուն,
Տանջանք տալով՝ աշխատեր են ընդունել տալ թրքութիւն.
Հայ գեղկուհիք չարչարուեր են, չեն ուրացեր սուրբ հաւատք,
Գլխիվար կախ, ծեծով քաղցով վերջացեր է իրենց կեանք։

Մեր մայրերը չեն գիտեր ե՞րբ, երեկոյի՞ն թէ առտուն
Պիտի քարշեն իրենց դուստրը անգութ գաղան Քրտին տուն.
Շատ անգամ ալ նոյն իսկ իրենք կ՛առեւանգուին Քուրտերէն,
Թողլով ետին մատաղ մանուկ, զրկուած իւր մօր կաթէն.

Հայրն ալ չկայ, պանդխտած գացեր կամ Քուրտը զայն սպաններ.
Այսպէս կ՛անցնի մեր թշուառ կեանք, երբէք մէկը մեզ չ՛օգներ։
Մինչ Աստուած հայ գիւղացին ստեղծեր է թշուառիկ.
Անբան թռչունք և անասունք են մեզնէ շատ երջանիկ։

Ոչխար եղնիկ թէ բռնուին անագորոյն գայլերէն,
Ձնծղուկ տատրակ թէ չ՛աղատուին չար բազէի ճանկերէն,
Նոցա տանջանք, ահ ու երկիւղ րոպէական կը լինի,
Իսկ մերինը շատ դժուար է. դարեր ի վեր նոյն կ՛ճնայ, վերջ չ՛ունի։

Երանի՛ թէ խաչէին մեզ, ժամեր եաքը կ՛աւանդէինք մեր հոգին.
Կամ հանէին մեզ կախաղան, րոպէներ եաք կը մեկնէինք մենք անդին.
Մինչեւ անգամ գլխատուէինք, այդ ալ լաւ էր, բաղդատելով մեր կեանքին.
Գոնէ չուտ մահ վերջ դնէր մեր ամենօրեայ տանջանքին,

Ո՛ւր էր արդեօք կատարուէլի՛ն այդ իմ՝ վերջին պատգամանք,
Խաչ կախաղան գլխատութիւն լինէին մեզ ազատման.
Ա՛լ հարկ չկար, ազի՛ւ եղբարք, ձեղնէ օգնութիւն յուսալ.
Բայց քանի որ ապրինք այսպէս, պարտաւոր էք մեզ հոգալ։

Եթէ Հա՛յ էք, զգացէք որ կը կրէք Հայու արիւն.
Ազատ երկիր հանգիստ օրեր անմահ չ՛ըներ ձեր անուն.
Ամեն Հայ ալ սուրբ պարտք ունի, առ հայրենիք աղգութիւն,
Կատարելով զայն կարող է անմահ առնել իւր անուն։

Մեծ ժողո՞վք պարտք հայրենեաց, թէ չունիք հայ ղեկացում.
Շուտ ուրեմն զգաստացէք, թօթափելով ձեր խոր քուն.
Դուք ալ, տիկնա՛յք և օրիորդք՝ որ վարէք կեանք փափկասուն,
Ազատ երկրի մէջ ապրելով՝ կարեկցեցէք Հայաստանեայց։

Թէ զաղթելով մենք ալ ձեզ պէս, փնտռենք հանգիստ մեր գլխուն,
Պատմութեան մէջ միայն կը մնայ Հայաստան և Հայ անուն։
Օն փութացէ՛ք, մեզ օգնեցէք, մատաղ լինենք ձեր հոգւոյն.
Մենք եղած ենք միշտ պահապան Հայաստանի սուրբ հողոյն։

94 Թուին, Ամերիկա

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ Է ՀԱՑ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ (1794–1894) ՅՈՒԲԵԼԻՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Այս պատկերը որ «Հանդէս Ամսօրեայ»ի խմբագրութիւնը հրատարակած է ներկայ 1894 Թուականի Հայ ազգին մէջ լրագրի սկզբնաւորութեան դարադարձը լիներլուն առթով, մեծ միածալ գիրքով է լուսատիպ (phototypique), որի մեծութիւնն է 50 × 35 սանտիմետր, տպուած 70 × 45 սանտիմետր քարտոնի (carton) վրայ այլ և այլ բնագրով։ Մէջ տեղը դրուած է Հայ լրագրութեան հիմնադրին՝ Տ. Յարութիւն Քհնյ. Շմաւոնեանի պատկերը, և բոլորտիքը՝ 1894ին հայերէն լեզուով հրատարակուող բոլոր լրագիրներուը իրենց խմբագրապետներու պատկերներով։

Գինն է 1 րբլ. 50 կպկ. կամ 4 ֆրանգ, ճանապարհածախսով միասին։

Սոյն առթիւ կը յայտնենք որ լոյս տեսած է նաեւ

Գալէմքեարեան Հ. Գ., Պատմութիւն Հայ լրագրութեան ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը։ Հար. Ա. 1794–1860. մէկ լուսատիպ պատկերով։ Վիէննա Մխիթարեան տպարան 1893։ Գին՝ ճանապարհածախսով՝ րբլ. 1 կամ 2 ֆր. և 50 սանթիմ։

Վերոգրեալ պատկերն ու գիրքը առնելու համար, դիմել Վիէննա Մխիթարեան Պատուարժան Միաբանութեան որ հրատարակած է զանոնք։

Կարելի է նաեւ առնել զանոնք, դիմելով Արմենիայի խմբագրութեան։

ՖՐԱՆՍԱ.

Ֆրանսայի Թագաւորական գերդաստանի ներկայացուցիչը որ փարիզի կոմս տիտղոսն ալ կը կրէ և որ այժմ աքսորական կը բնակի Անգլիա, մահամերձ վիճակի մէջ է։ Իւր արքայազն ընտանիքի անդամները զանազան երկիրներէ եկած հաւաքուած են Սթօու-Հաուզ դղեակը ուր կը գըտնուի հոգեւարք իշխանը։

— Պրիւնօ քահանայն որ մի քանի մարդիկ սպաննած և կողոպտած լինելու յանցանքով դատապարտուած էր, իր չհատուցուածքների կեդրոնավայրին, Լաւալի մէջ գլխատուեցաւ։ Այս քահանայ որ ուսեալ բայց անբարոյական մէկն էր, իր ձերբակալուած ժամանակ անուն հանեց թէ ինք անհիւանական է և այդ սկզբունքի ծառայելու համար արած է իր գողութիւնները և սպանութիւնները։ Բայց կերեւի թէ իր վերջին րոպէների մէջ խիղճը արթնցած էր սրտին մէջ. ներժեռանդութեամբ ու լալով ներկայ գտնուեցաւ վերջին պատարագի մը և փարեցաւ խաչափայտին, երբ ա՛լ ամեն բան վերջացած կառավինատը։

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒՐԵՐ

Կ.պոլսի իտալական նոր դեսպան Պր. Թոմազօ Քաթալանի օգոստ. 28ին հանդիսաւոր կերպով Սուլթանին ներկայացած և իր պաշտօնի վերաբերեալ թուղթերը մատուցած է։ Սուլթանը չատ սիրալիր և քաղաքավար կերպով ընդունած է զինք։ Պ. Քաթալանի պալատէն ելնելով, Բ. Դուռը գնացած և իր պաշտօնական առաջին այցելութիւնը տուած է Մեծ Եպարքոսին որ կէս ժամէ չափ տեսակցելով իրեն հետ, չատ սիրալիր ընդունելութիւն ցոյց տուեր է։

Երբ Անգլիոյ դեսպան Սըր Ֆիլիպ Քըրրի Կ.պոլիս եկաւ, ստիպուեցաւ 25 օր սպասել Սուլթանի առաջին ունկընդրութեանն արժանանալու համար։ Նոյնպէս ուրիշ նորեկ դեսպաններին՝ Թիւրքերը միշտ վեհաձգութիւններով չեն Թոյլատրած որ չուտով արժանանան Սուլթանին առաջին անգամ ներկայացուելու բաղդին. բայց այս անգամ Իտալիոյ նախարարապետ Պր. Քրիսբի պայմանաժամ տուած էր Բ. Դրան որ իր նոր դեսպան Պր. Քաթալանի՝ Կ.պոլիս մտնելէն մինչեւ 15 օր Սուլթանի ներկայութեանն ընդունուի։ Եւ արդարեւ 15 օրը չանցած հրաւիրուեցաւ պալատէն ուր Սուլթանի սիրալիր ընդունելութեան արժանացաւ։

— Հռչակաւոր Բասթէօրի աշակերտներէն Տօքթէօր Նիքոլ որ Կ.պոլսի մէջ միկրոպաթանութեան մի դպրոց հիմնելու համար 20,000 ֆրանգ տարեթոշակով Կ.պոլիս տարուած էր, ոչ միայն իր ձեռնարկի դէմ զանցառութիւնների և արգելքների հանդիպած, այլ և իր ամսականներ կանոնաւոր վճարուած չլինելով, ստիպուեր է գանգատագրով դիմել Սուլթանին և խնդրել որ չուտով մաքրեն իր հաշիւները որովհետեւ փարիզ պիտի վերադառնայ։

— Կ.պոլսի մէջ լուր կը պտըտի թէ Անգլիա առաջարկեր է Կիպրոս կղզին վերադարձնել Թիւրքերին եթէ անոր փոխարէն Կրէտէ կղզին իրեն տրուի։ Այս նպատակի հասնելու համար, կասեն, Անգլիացիները ձեռքի տակէ խաղեր կը խաղան Կրէտէի մէջ գրգռութիւններ սերմանելով։

— Կիպրոսցն կիմացուցեն թէ Լարնաքայի պահապան անգլիացի չորս զօրագունդերին անկէ մեկնելու լուրը մեծ յուզում պատճառեր է տեղացի քրիստոնեայ ժողովրդին մէջ որոնք կարծեր են թէ Կիպրոսը վերստին Թիւրքերին յանձնելու մտադրութիւն կայ։

Անգլիական լրագիրներուն մէջ հրատարակուած կիսապաշտօնական մի ազդարարութիւն կը յայտարարէ թէ անգլիացի զօրքերուն Լարնաքայէ մեկնիլը քաղաքական ոեւէ նշանակութիւն չունի։ Այդ զօրքեր Մալթա պիտի երթան, անոնց տեղը բռնելու համար որոնք Մալթայէն Եգիպտոս ղրկուած էին։ Այսու ամենայնիւ անգլիական մի փոքրիկ զօրաբաժին պիտի մնայ միշտ Կիպրոսի մէջ։

— Սուլթանը իրաւէ մը հանած է որով օսմանեան լեզուի ուսումը պարտաւորիչ հրատարակուած է Թիւրքիոյ ոչխամ բոլոր վարժարաններուն համար։

— Մեռեալ ծովին մէջ պիտի սկսի քիչ ժամանակէն մի հոգենաւ բանիլ որ Ամմէրտամ ապսպրուած է։ Մեռեալ ծովի հիւսիսային արեւմտեան եզերքը այդ կերպով կը միանայ արեւելեան կողմին ուր հարուստ Պետվիներ և Յոյներ կը բնակին։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Ալեքսանդրիոյ մէջ օբէնպիէր ժողովի նախագահը և տեղացի մե

քանի նշանաւոր անձեր ամ. բաստանուելով թէ դերձները ծախու առած են, ձերբակալուեր և յետոյ արձակուեր են։ Այս միջադէպ սաստիկ յուզում է պատճառեր։

— Հօնքօնքէն (Չինաստան) կը հեռագրեն թէ մի սոսկալի հրդեհ պատահեր է Քանթօնի առջեւ գըտնուող չոգենաւներին մէջ որոնք ծաղկավաճառութեան չուկայ մը կը կազմէին և միանգամայն ծովին վրայ կանգնած չարժուն տուներ են։ Այդ չոգենաւերէ հարիւրաւորներ որոնք իրար կապուած էին, կրակին զոհ եղան և մէջը գտնուողները չկրնալով չփոթութեան պարաններըը կտրել և ծովին բացերը վախչիլ, որով 1000էն աւելի մարդիկ բոցերուն ճարակ դարձան։

— Լուր կայ թէ Սերպիոյ երիտասարդ թագաւոր Ալէքսանդրը Ալմանիոյ վիլհելմ կայսրին այցելութիւն մը պիտի տայ։ Հաւանօրէն հոկտ. 20ին Պերլին կերթայ։

— Պուքրէշի մէջ և Ռումանիոյ ուրիշ մի քանի տեղերն երկրաշարժի ցնցումներ եղած են օգոստ. 31ին։ Շատ ժլատներ պատահեր են. կալոցի մէջ մայր եկեղեցին, փոստատունը և դատարանը ծանր կերպով վտանգուեր են։

Une Révolution Économique et Agricole

Les Fraises, Raisins, Pêches, Abricots, Cerises, Poires Fondantes, etc.

Conservées à l'état frais en hiver et jusqu'en avril et mai comme *s'ils venaient d'être cueillis.*

L'application des découvertes du savant Docteur Milon, relatives à la conservation de tous les fruits, gardés pour l'hiver et jusqu'en avril et mai aussi frais que s'ils venaient d'être cueillis a donné des résultats surprenants. *On a vu à ce dernier printemps des fraises, des cerises, des abricots, des pêches de l'année dernière conservées à l'aide de la théorie de l'acide carbonique rigoureusement pratiquée.* Et cette application est la simplicité même et si peu coûteuse qu'il est inutile d'en parler.

Quelle révolution économique et agricole que celle qui consiste à conserver à l'état absolument frais des fruits de toutes sortes. Quelle révolution que celle produite par des fraises, des cerises servies au mois de décembre.

Quelle spéculation sera plus avantageuse que celle qui consiste à acheter à vil prix des fruits de toutes sortes, ou conserver ceux de son jardin, pour les revendre au poids de l'or au printemps, en hiver et jusqu'au commencement de l'été ! quoi de plus agréable et de plus rare, en général, pour un amateur que de déguster au mois de mai une poire succulente conservée depuis l'automne comme si elle venait d'être cueillie.

Il n'en coûte que 1 fr. 50 pour recevoir ce procédé infaillible dont le succès est absolument garanti. Adresser en timbres ou mandat, à M. Lebrun, dépositaire, 8, rue Victor Massé, Paris.

ԳԱՌՆԻԿ ՏԷՕՓՄԷՃԵԱՆ
Ճաշնեակատար — Գործակալ
ամեն տեսակ
Գրական եւ Տպագրական արտադրութեանց
եւն. եւն. եւն.
Հաստատեալ 1890 ի Ռուսճուկ

Պատիւ ունիմ ծանուցանել Պուլկարիոյ և Ռումանիոյ Ազգային վարժարանաց Պատասխանատուին Հոգաբարձութեանց, որ գալոցական 94-95 նոր շրջանին առթիւ պատրաստած եմ լաւագոյն ու գիւրատոյց դասագրոց մեծագանակ մաքրութ մը, և փոխարէն ու զոհացուցիչ պայմաններով կը հայթայթեմ զանա. փափաքողաց նամակներ կը յղուին նմոյշներ, ամէն մէկ օրինակի համար 1 ֆրանգ նամակագրոշմի փոխարէն։

Հասցէ՝
Deukmédjian
(Bulgarie) ROUSTCHOUK

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գերքերը կարելի է ըստանալ Արմենիահ խմբագրատունէն իրենց առջեւ նշանակուած գիներով որոնց մէջ հաշուուած է և ղրկելու ֆոստի ծախքը։

Ադրէսը կանխիկ վճարուած՝ գիրք ղրկուիր։

Հ. Կղեմէս Վ. Սիպիլեան, Դասաւորութիւն Ռուբիներու դրամոց (Մէկ լուսանկարատիպ պատկերով, վեց վիմատիպ տախտակօք — 79 պատկեր —, և 53 պատկերօք ի բնագրին, որոց մէջ կան բաղմաթիւ չհրատարակեալներ։ Մեծ 8° երես ԺԶ+88+32)։ Վիէննա 1892։ Գին 7 ֆրանք։

Յօսէք Վասն Հայրենասիրութեան Բ տպագրութիւն 60 սնթմ.։

Հայկակ Լկինեան, Կակծանք ցեաը Ա, Ն. Եորք. 1890 (Հեղինակին ընծիր մէկ բանաստեղծութիւնն է այս արձակ գրուած)։ 30 սնթմ.

Վ. Փափազեանց—Պատկերներթիւրքահայերի կեանքէց (Հեղինակին 11 հատ են արձակը վէպիկները)։ 4 ֆրանք։

Բ. Յ. Վարդուկեանց. ԴԱՀԼԱՀԼԻԿ Դրուագ Ա. (Հեղինակին յատուկ ոճն եղող ճարտար բանահիւսութեամբ և գրաբար լեզուով գրուած ոտանաւորներ են Աստուծոյ արարչագործութեան հրաշալիքներն պատմող)։ Գինն է 75 սանթիմ։

ՀԱՑՈՑ ՀԱՑԲԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ Ա ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ Ա ՀԱՑԱՍՏԱՆԻ ՀԱՑՈՑ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ համառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու։

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայերէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ։ Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը ղրկուի 5 ֆրանքով Հատին գինն է 15 սանթիմ (Պարսկաստանի Հայերին համար 10 սանթիմ)։

Ինչպէս ամեն լրագիրներ, Արմենիան ալ կընդունի ծանուցումներ հրատարակելու համար. անոնք որ պէտք կունենան Արմենիայի միջոցով մէկի դիմում առնել կամ մի բան յայտարարել, պատրաստ են ընդունելիրենց ծանուցումներ ըստ, լրագրական սովորութեան։ Ծանուցումներուն գիները նշանակուած են Արմենիայի ճակատը, տառին վրայ հաշուելով. 1 երկաթագրի (գլխագիր) համար 2 սանդիմ և 1 բոլորգրի համար 1 սանդիմ։ 3 անգամ դրուելիք ծանուցումի գինին վրայ 0/0ին 10 զեղչ կը լինի. 10 և աւելի անգամներ դրուելիք ծանուցումի գնի վրայ 0/0ի 30 զեղչ։ Սակարկութիւն չընդունուիր։

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած։ 1 ֆրանգ։

ԼՈՒՍԻՆԵԱՆ ՍԲԲԱԶԱՆԻ ՊԱՏԿԵՐՔ

Տաճկական բռնութեան նահատակ եղող Խորէն Նարպէյ-Լուսինեան Սբբազանի պատկերը ընտիր թղթի վրայ տպուած կը ծախուի Արմենիահ խմբագրատունը։ Գինն է 65 սանթիմ, փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Մ. Փորթուգալեանի հրատարակած գերքերուն վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը ղրկուի փակագծի մէջ նշանակուած գիներովը։

Ա. ՀԱՑ ԴԻՒՑԱԶՆՈՒՀԻ ՄԸ (Սպառած)։

Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »

Գ. ՄԱՂՄՈՍ ԻՍՐԱՑԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊՏԱՑ (Սպառած)

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(Հայաստանցիներէ պանդխտութեան տխուր հետեւանքներէ մէկ փոքրիկ պատկերը կը ներկայացունէ վիպական կերպով։) Գին (90 սնթմ.) 1 ֆրանգ 20 սնթմ.

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենաց աւարտելոյն (Մեծմասնութ հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են)։ 50 հատը 2 ֆր. և 50 սանթիմ, հատը (5 սնթմ.) 10 սանթիմ։

Է. ԼԻՆԶԻ ՕՐԻՆԴԸ ՅԱՃԽԱՀԱՑԱՍՏԱՆՈՒՄ. (Սպառած)

Ը. ԹԻՒՐՔԻԱԻ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ. Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թիւին բաղդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը։) Գին 50 սանթիմ (35 սանթիմ)։

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՑՈՒՇԱՐԱՐ (Արմենիոյ Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն դեռ 30ի չափ ամփոփուած են ցուշարարի մէջ որ ուրիշ ոեւէ գրքով 124 երեսներէ կը բաղկանայ)։ (1 ֆրանք)։ 1 ֆր. 40 սանթիմ

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ թիւրքերէն արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներ գիժած են իրենց վրէժ լուծելու համար)։ (15 սնթիմ) ,20 սնթմ.

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (Ցունաստանի մէջ թիւրքերէն արած բարբարոսութիւնն. ներէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացունէ և ցոյց կուտայ թէ Ցոյներն ի՛նչպիսի միջոցներ գիժած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15սանթիմ) ,20 սանթիմ։

ԺԲ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

ՆՄՈՅՇՆԵՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ ԳՐԱԾ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐԷՆ

Մ. Փորթուգալեանի գրած հայրենասիրական ոտանաւորներէ մի քանին ամփոփուած են այս տետրակի մէջ իրեւ նմոյշներ զանազան քաղաքներէ մէջ և զանազան տպաւորութիւններըը տակ իւրաքանչիւրն գրած ոտանաւորներէն որոնք ժամանակին հրատարակուած չլինելով կորսուած են այժմ։ Այն մի քանի ոտանաւորներ որոնք իրենց նմոյշ ամփոփուած են այս տետրակի մէջ, ցիր և ցան կը գտնուին Կ. Պոլիս տըպագրուած ազգային երգարաններին մէջ՝ որոց վերջին տպագրութիւնն վաղուց արդէն արդիլուած է, և Ասիա և Արմենիա լրագիրներին մէջ։ Նմոյշներէ մէջ փոքրիկ տեղեկութիւններ տըրուած են նաեւ թէ այդ ոտանաւորներ ի՛նչ տպաւորութիւններէ տակ ներշնչուելով գրուած են։ Գինն (10 սանթիմ) 15 սանթիմ։

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐՔ

(Կ. ՊՕԼՄՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ Ա ԻՆՆՈՒԱՏ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր տպականուած վարքուբարքով որչա՛փ չարիքներէ պատճառ դարձած է և վերջի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ։ Գինն 1 ֆրանգ, (75 սանթիմ)

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : François CARRIÈRE
ՄԱՐՍԷԼ

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie et Papeterie du Midi
Allées de Meilhan, 44.